ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2010թ. փետրվարի 01-ի նիստում /արձ. թիվ1/
ԳԽ Նախագահի տնօրեն Ս.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
«01» փետրվարի 2010թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՄԲԻՈՆ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. Սույն կանոնակարգով սահմանվում է *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ամբիոն»* մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգը:

1. 2. *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ամբիոն»* մրցանակաբաշխությունը կազմակերպվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում 2 անգամ կիսամյակի արդյունքներով, որի նպատակն է ամփոփել և խրախուսել մասնաճյուղի ամբիոններում տարվող ուսումնամեթոդական և գիտական գործունեությունը:

1. 3. Սույն կանոնակարգը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

2. «ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՄԲԻՈՆ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2. 1. *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ամբիոն»* մրցանակաբաշխությունը կազմակերպում և անցկացնում է *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ամբիոն»* մրցանակաբաշխության հանձնաժողովը (այսուհետ՝ *Հանձնաժողով*):

2. 2. *Հանձնաժողովը* բաղկացած է 14 անդամից, որի կազմի մեջ մտնում են մասնաճյուղի գիտքարտուղարը, ուսումնամեթոդական բաժնի վարիչը, ամբիոնների վարիչները և տնօրենության կողմից երաշխավորված անդամներ:

Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունը իրականացնում են հասարակական հիմունքներով:

2. 3. *Հանձնաժողովը* ղեկավարում է տնօրենի կողմից նշանակված նախագահը:

2. 4. *Հանձնաժողովը* հաստատում է իր գործունեության աշխատակարգը:

2. 5. *Հանձնաժողովի* նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

3. «ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՄԲԻՈՆ» ՄՐՑԱՆԱԿԱԿՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3. 1. *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ամբիոն»* մրցանակակրի ընտրության գործընթացում Հանձնաժողովը առաջնորդվում է հետևյալ հիմնական չափորոշիչներով.

ա/ կրեդիտային համակարգով ուսումնառության կազմակերպման շրջանակներում ամբիոնում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման, ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների իրականացման, ուսման որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքներ

բ/ ամբիոնային ծանրաբեռնվածության առարկաների գծով ուսանողների կիսամյակային ուսման առաջադիմության տոկոսներով

գ/ աբիոնների կողմից տարված ուսումնամեթոդական և գիտական աշխատանքներով

դ/ ամբիոնների դասախոսների կողմից գիտական աշխատանքներ կատարելու ունակություն, հրատարակության պատրաստած և հրատարակությունների /դասագիրք, մենագրություն, ուսումնական ձեռնարկ, ուսումնամեթոդական ձեռնարկ, հոդված, զեկուցումների թեզիս/ քանակով

ե/ ամբիոնի կողմից գիտամանկավարժական կադրերի որակավորման բարձրացման աշխատանքներ՝ մեկ կամ մի քանի հարակից ուղղություններով

զ/ ուսուցման նոր տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման հետ կապված նորարարությամբ

է/ կրթության որակի ապահովման ուղղությամբ ամբիոնի ձեռքբերումներով

ը/ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակների վերաբերյալ հարցման արդյունքներով:

3. 2. Ամբիոնների դասախոսների կողմից և նրանց ղեկավարությամբ ուսանողների կողմից գիտական աշխատանքների կատարման մակարդակը գնահատվում է 5-7 միավորներով

- 5 միավորի կարող է հավակնել այն ամբիոնը, որի դասախոսները և նրանց ղեկավարությամբ ուսանողները մասնակցել են ներմասնաճյուղային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ
- 6 միավորի կարող է հավակնել այն ամբիոնը, որի դասախոսները և նրանց ղեկավարությամբ ուսանողները մասնակցել են հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում
- 7 միավորի կարող է հավակնել այն ամբիոնը, որի դասախոսները և նրանց ղեկավարությամբ ուսանողները մասնակցել են միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և ունեն հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4. 1. Հանձնաժողովի կողմից ընդունած որոշումները կարող են բողոքարկվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենին, *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ամբիոն»* մրցանակաբաշխության անցկացման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

4. 2. Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կամ *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ամբիոն»* մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ օրենսդրության, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրության և սույն կանոնակարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենը գրավոր, պատճառաբանված որոշմամբ անվավեր է ճանաչում *«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի լավագույն ամբիոն»* մրցանակակրի ընտրությունը և 5- օրյա ժամկետում նշանակում նոր ընտրություն: